



# ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

01 դեկտեմբերի, 2017թ.

Երևան

## Կրթական նոր ծրագիր 120 ՔՀԿ-երի համար

Առաջին անգամ Հայաստանում կրթական հավաստագրային ծրագիր է իրականացվում Հայաստանի ամերիկյան համալսարանում՝ ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) կարողությունների զարգացմանը:

Դեկտեմբերի 4-ին, ժամը 9-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում կսկսվի ՔՀԿ ներկայացուցիչների առաջին խմբի դասընթացը, որին կմասնակցի 15 ՔՀԿ ներկայացուցիչ՝ ՀՀ յոթ մարզից:

Կրթական նոր ծրագիրն իրականացվելու է Եվրամիության կողմից ֆինանսավորող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում, որի նպատակը Հայաստանում քաղաքացիական ծայր հանրային քննարկումների ժամանակ լսելի դարձնելն է:

Կրթական ծրագրի շրջանակներում հանրային քաղաքականությունների մշակման, հանրային բյուջեների ու քաղաքականությունների մշտադիտարկման, կռալիցիաների կառուցման և ՔՀԿ-կառավարություն կառուցողական երկխոսության թեմաներով կուսուցանվեն 120 ՔՀԿ ներկայացուցիչներ՝ Երևանից և մարզերից: Դասընթացների ավարտին ՔՀԿ ներկայացուցիչներին բուհի կողմից կտրվեն ավարտական հավաստագրեր:

**«Կառուցողական երկխոսության հանձնառություն»** ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՄԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կռալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա: Մա հնարավորություն կտա կազմակերպություններին (ովքեր արդեն իսկ աշխատում են թիրախային կռալիցիաներում) ձեռք բերել նոր ռեսուրսներ, քաղաքացիական փորձագետներին միավորել և խրախուսել իրենց մասնակցությունը տեղական և ազգային քաղաքականությունների օրակարգի



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:



Իրավաբանների հայկական ասոցիացիա



ԿԱՌՄՈՒՄԱՆ ԵՎ ԿՐԻՍԻՍԻՍԻՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

ձևավորմանը, հատկորոշել ընդհանուր խնդիրներն ու առաջնահերթությունները և դիմել կառավարության՝ կառուցողական և ռազմավարական քաղաքականության վերաբերյալ նախաձեռնություններով:

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշտերին կտրամադրվեն ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք կուղղվեն հանրային քաղաքականությունների զարգացմանն ու կունենան շոշափելի արդյունքներ 9 թիրախային ոլորտում, որոնցից են արդարադատությունը, կրթությունը և բիզնեսը:

**Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ)** ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունն իրագեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

**Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.**

Հեռ.՝ 540199;

Ֆաքս՝ 580299;

Էլ. Հասցե՝ [info@armla.am](mailto:info@armla.am)

Կայք՝ <http://www.armla.am>, <http://ccd.armla.am>,



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:



Իրավաբանների հայկական ասոցիացիա

